ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

75

Գործնական որհուրդներ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ

Չլսող կամ լսողության խանգարում-ներ ունեցող երեխաները, ինչպես բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց՝ նշանակում է **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին**:

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակամության համար:

1. ԴԱՍԱՐԱՆ

Առջևում և կենտրոնում: Վստահ եղեք, որ լսողության խանգարում ունեցող երեխան առջևում է նստած՝ մոտ հրահանգներին և FM համակարգին, և դասարանի այն մասում, որտեղից նա կարող է տեսնել Ձեզ, գրատախտակը և դասընկերներին:

2. ՁԵՐ ԴԵՄՔԸ ՏԵՍՆԵԼԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ՆՐԱՆՔ ԼՍՈՒՄ ԵՆ

Լսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ կարողանում են կարդալ շրթունքներից: Նրանք հասկանում են խոսքը՝ դիտարկելով խոսողի շրթունքների շարժումները, դեմքի արտահայտությունները և ժեստերը: Խոսելիս միշտ դեմքով կանգնեք դեպի դասարանը, կրեք վառ գույնի շրթներկ, խոսեք դանդաղ և հստակ՝ շեշտադրելով բառերի վերջավորությունները:

3. ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ԴԱՍԻՆ

Նախապես սովորողի ծնողին կամ հատուկ մանկավարժին տրամադրեք բառերի և տերմինների այն ցանկը, որոնք նա դեռ չի լսել և որոնց հետ նա պետք է ծանոթանա հաջորդ դասի ընթացքում: Անծանոթ բառերը ավելի վաղ ներկայացնելով սովորողին՝ Դուք կարող եք նվազագույնի հասցնել այդ բառերը ընկալելու նրա դժվարությունը: Հակառակ պարագայում նոր նյութ բացատրելիս նոր բառերը ուղեկցեք սովորողին ծանոթ հոմանիշներով կամ նկարներով:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

AACEP

4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿ

Նախապես սովորողի ծնողին կամ հատուկ մանկավարժին տրամադրեք բառերի և տերմինների այն ցանկը, որոնք նա դեռ չի լսել և որոնց հետ նա պետք է ծանոթանա հաջորդ դասի ընթացքում: Անծանոթ բառերը ավելի վաղ ներկայացնելով սովորողին՝ Դուք կարող եք նվազագույնի հասցնել այդ բառերը ընկալելու նրա դժվարությունը: Հակառակ պարագայում նոր նյութ բացատրելիս նոր բառերը ուղեկցեք սովորողին ծանոթ հոմանիշներով կամ նկարներով:

5. ԱՆԱՂՄՈՒԿ ՄԻՋԱՎԱՅՐ

Լսողության խանգարում ունեցող սովորողները դժվարանում են կենտրոնանալ, երբ առկա է ֆոնային աղմուկ: Դասարանի դռները կամ պատուհանները փակելը պարզ և արդյունավետ միջոց է այդ աղմուկը նվազագույնի հասցնելու համար: Հիշեք՝ սովորողները, ովքեր օգտագործում են լսողական օժանդակ տեխնոլոգիա, չեն լսում այնպես, ինչպես իրենց հասակակիցները: Ուսումնական նյութը նրանց համար կդառնա հասանելի, եթե դասարանում առկա ավելորդ աղմուկը հասցվի նվազագույնի:

6. ՏԵՍՈՂԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ

Փորձեք հնարավորինս շատ օգտագործել նկարներ, գրաֆիկական պատկերներ և տեքստային նշումներ: Նոր նյութ բացատրելիս հնարավորինս շատ օգտագործեք գրատախտակ և դիդակտիկ պարագաներ: Դասարանին տրվող առաջադրանքները ներկայացրեք գրավոր տեսքով, իսկ բանավոր տեղեկատվությունը համալրեք նկարներով, գծապատկերներով, սխեմաներով: Ուսումնական նյութն ամրապնդելու նպատակով կարող եք կազմակերպել տեսաֆիլմի դիտում:

7. ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: